արժանի նորանոր նշանաւոր յօդուածներով ի բարոյական զարգացումն մեզ ընթերցողաց Արարատայ, և զի՝ արդէն Տպարանն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ունի պատրաստի բնեռաձև գրոց ձուլածոյ տառերն, որովք քանիցս իմ աշխատութեամբ զանազան տեղերից գտած և արտագրած՝ նոյնպիսի գրովք արձանագրութիւնքը տպագրուած են, ուստի փութամ յանձնել խմբագրութեանդ՝ յօդուածոյս հետ միասին զօրինակն հինգ տող բևեռաձև արձանագրութեան՝ զերևեալն ի վերայ քարաժայռին եղելոյ Ինկրբոյ ամրոցաձև աւերակաց՝ որ մերձ խիներն Ղանդիճայ գիւղ Շիրակայ, և ենդրեմ Արարատայ էջերի մէջ զետեղել ի հետաքրքրութիւն հնասիրաց և հնագիտաց։ Այս ասելիս յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ Աղէքսանդրապօլցի Բարեկրօն Յովսէփ Աւագքահանայի Պոստանդեանց և Պ. Աւետիքի Եզեկեանց, որք ներկայ արձանագրութիւնը ձեռք բերելոյ համար օժանդակեցին ինձ։

ՄԵՍՐՈՊԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ

6 50 Յունուար 1875 թ.

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ։

ՑԱԽԱՂՑԽԱՑԻ։

Ո՛ և իցէ գործոյ գովեստ և կամ պարսաւ տալը ամենայն մարդոց գործն է, բայց թէ շատ քիչ կպատահի՝ որ ճշմարիտ բարին իւր բարի նպատակներով գովութեան արժանի լինի, և չարն էլ իւր չար պարագաներովն անարգանաց ենթարկուի. ուստի այս կէտիս իմ գովեստը հանդերձ շնորհակալութեամբ ոչ որին չէ վերաբերում, եթէ ոչ Աղէքսանդրապօլեցի Պ. Մարտիրոս Զիթողձեանցին։

Վասն զի յիշեալ Պարոնը երբ Ախալցխայ քաղաք եկաւ, և ի վաղուց հետէ Կարնոյ քաղաքին մէջ եղած ժամանակին անդամ լսելով Վարդանեան Ուսումնարանի բարի համբաւը և նորա աշակերտաց յառաջադէմ զարգացումները, ուզեց ի սոյն ամի անցեալ Յուլիսի 28 ին, տեղւոյս յիշեալ Ս. Վարդանեան դպրոցին այցելութեան եկաւ և աշակերտաց յառաջադէմ զարգացած և աշխոյժ պատասխանատուութեանց արդիւնքներէն գրաւուելով Պ. Զիթողձեանցն ինքնաստ ազգատիպ մանկանց ընծայեց յԺ--Ռ բուրլի արծաթ, որ յիշեալ գումարով Հոգաբարձութիւնը կարողանայ հոգս քաշելով բերել տալ աշակերտաց դասուց վերաբերեալ գրեանք։

Ահա այսպիսի բարեխութեամբ Պատուարժան Պարոնը ուրախացրեց անմեղիկ մանկանց սրտերը ցոյց տալով իւր բարեպաշտական ջերմ զգացողութիւնը։

Ուստի և մեք գոհ տրտով Վարդանեան դպրոցի աշակերտաց կոչմանէ շնորհակալութիւններս կը յայտնենք հրապարակաւ, շնայելով իւր տրոցը՝ այլ տուողի ազնիւ սրտին։

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՍԽՍԱԿԵԱՆՑ.

Ի 1-Ն Օքտոմբերի 1875 թ.

ՅԱԽԼՈՒՅ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՆ ԲԻԻՁԱՆԴԱՆ.

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱՑ ԽԱՐԴԱԽՈՒԹԻՒՆՑ ԱՌ ՊԱՏԿԷՐ ԵՒՍ.

Հետեւեալը Լոյս Հանդիսի Բ. շրջանի Ա. թուոյն մէջ հրատարակուած է, յորում բողոքական Հայոց եւ քարոզչացն մի հակասական եւ սխալ համոզման պարզ պատկերն եւս կատեսնուի, յորում կատարեալ Խորդանոս-ին իւր իսկական նշանակութեամբ դարձեալ կփայլի միսիոնարաց վերայ։

"Թուրքիոյ մէջ բողոքական Հայք ի-լենց բողոքականութեանը համար չեն մոռնար թէ Հայ են, ոչ ալ նուազ կը սիրեն իրենց Հայ ազգը, կամ նուազ կը պարծին իրենց ազգային պատմութեամբը. արդարև անոնք պիտի չբաժանուին Հայաստանէայց Եկեղեցիէն, ոչ ալ զատ քաղաքա-